ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-Ի ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ, համաձայն մեր խոստումի, ուղարկեցինք Սենկևիչի «Առանց դաւանանքի» վէպի այն մասերը, որ լոյս էին տեսել 1892 թ.։ Այդ նէյրը պարունակում է 304 էջ «Մուրճ»-ի դիրքով։

«ՄՈՒՐՃ»-Ի ՆԵՐԿԱՑ ՀԱՄԱՐԸ ուղարկւում է թէ նոր և թէ անցեալ 1892 թ. բաժանորդներին։ Հետևաբար նոքա, ովքեր ուզում են «Մուրճ»-ի համարները կանոնաւորապէս ստանալ, թող բարեհաճեն չուշացնել բաժանորդագրութիւնը։ Յայտնում ենք, որ կարելի է բաժանորդ գրւել. սկզբում ուղարկելով միայն երկու (2) ռուբլի, մնացածը լրացնելով մինչ լունիս ամիսը։

«ՄՈՒՐՃ»-Ը ՁՄԻՒՌՆԻԱՑՈՒՄ։ Մի մանաւոր նամակից քաղում ենք հետևեալը՝ «Երևելի գրագէտի հռչակ վայելող Մամուրեանի զրպրոցից ելածները և ոչ մի գիրք էին կարդացած լինում, որովհետև աշակերտական մատենադարանի հոտն անգամ չը կարինքը և իւր գրագէտ բարեկամները լոման, լոման և լոման էին թարգմանում ու գրում։ Այսպէս՝ ես շատ լոյս չունեմ, որ «Մուրճ»-ը տարածել կարողանայ այստեղ, Մամուրեանն իւր կուսակցութիւնով հակառակած են, որովհետև Դուք բարեկամ չէք «Նոր-Դար»-ին։ Թէև հասարակ ժողովրդի ընթերցարանում կայ «Մուրճ»-ը, բայց հայկական «քլիւբ»-ում՝ ոչ, ինչպէս և չը կայ «Մշակ»-ը։ Բայց «քլիւբ» ասելով թեթևասիրտ երիտասարդների ժողովարան պէտք է հասկանաք»։

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ։ Տիկին Մարիամ Մելիք-Աղամալեան հաստատուած է Գրիգոր Արծրունու ժառանգութեան իրաւունքների մէջ։ Համաձայն հանգուցեալ Գ. Արծրունու կտակի, նորա հրատարակած «Մշակ» լրագիրը անցնում է տիկին Մելիք-Աղամալեանի կարգադրութեան ներքոյ, որը և կը հրատարակի այն։ Այսպիսով «Մշակ»-ի հրատարակութիւնը կը նորոգւի, երբ հրատարակչուհին կը ներկայացնի կառավարութեանը խմբագրին և երբ վերջինս կը հաստատուի։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Գ. Ա. ՇՌՈՒՄՖԻ համար։ Ներկայ լունար ամսի 17-ին, կարգադրութեամբ «Մուրճ»-ի խմբագրութեան, հոգեհանգիստ

կատարուեց հանգուցեալ Գուստաւ Ադոլֆ Շոումֆի յիշատակին, Թիֆլիսի Տափի թաղի Գամոյենց եկեղեցում։ Հոգեհանգիստը կատարեցին ս. պատարագից յետոյ նոյն եկեղեցու քահանաներ՝ տէր-Յովհաննէս Մարտիրոսեան և տէր-Սարգիս Բէգնազարեան։ Վերջինս, գլխաւորապէս գրագէտ դասակարգին և երիտասարդ-ինտելիգենցիային պատկանող բաւականին մեծ բազմութեան առաջ պատշաճաւոր քարոզ խօսեց։ Արժանապատիւ տէր-Սարգիսը շեշտեց այն հանգամանքը, թէ որքան սիրով է յիշատակել Հայաստանեայց եկեղեցին նաև օտարազգի մարդկանց, որոնք ծառայութիւն են մատուցել եկեղեցուն, ազգին կամ սորա գրականութեանը։

ՀԱՑՈՑ ԹԱՏՐՈՆԻ 35-ԱՄԵԱԿԸ տօնուեց մի տօնախմբական ներկայացումով Արքունական թատրոնում, յունուարի 28-ին, մասնակցութեամբ հայոց դերասանական խմբի և օտար բեմերի ներկայացուցիչների՝ պ. Ֆօրկատուի (ռուսաց), Աբաշիձէի (վրաց), տ. տ. Մարի Գրիզէ Մոնբազոնի և Լասալի։ Ներկայացումից առաջ հանդէս կատարուեց. բեմի վերայ խմբուած հայ դերասանների առջև՝ հասարակութեանը մի քանի խօսք խօսեց պ. Ա. Երիցեանը, որից ի միջի այլոց յայտնուեց, որ հայերէն լեզուով ինքնուրոյն և թարգմանական գրուել են մինչ 714 պիես. պպ. Ֆօրկատուն, Աբաշիձէն և Լասալը շնորհաւորեցին հայկական բեմը ոտանաւորներով և մի քանի ազդու խօսքերով։ պ. Պետրոսեանը կարդաց պ. Յովհ. Թումանեանցի այդ առիթով գրած ոտանաւորը։ Պպ. Ֆօրկատուին և Լասալ պսակներ տուեցան։ Ապա տրուեց 1863 թ. առաջին անգամ խաղացուած «Դալալ Ղազօ» վօդըւիլը, որից յետոյ օպերետային ֆրանսերէն երգեր երգեցին տ. Լասալ և տ. Մոմբազոն. վերջինս երգեց նաև հայերէն լեզուով «Ծիծեռնակ»։ Ապա խաղացին «Հաջի-Սուլէյման» վօդըւիլը։ Վերջինս լոկ պատմական նշանակութիւն ունի, իբր արդէն հնացած պիես։ Այդ պիեսներում աչքի էր ընկնում մանաւանդ կոմիկ պ. Տէր-Դաւթեանի խաղը։ Ներկայացումը վերջացաւ լաւ յաջողուած կենդանի պատկերով, որ ներկայացնում էր «Գեղարուեստը»։

Թատրոնական դահլիճը զարդարուած էր տրանսպարանտներով, որ ներկայացնում էին անցեալի կարեւորագոյն դերասանների անունները՝ Ադամեան, Ամբրիկեան, Ջմշկեան, Մնակեան, Ֆասուլաճեան, Հրաչեայ, Աստղիկ, Գարաքաշեան և Սիրանոյշ։

Թատրոնը ամբողջովին բռնուած էր հանդիսականներով, գները՝ թանկացրած էին։

Այդ օրը տեսնում էին հայոց թատրոնի 35-ամեակը. բայց ինչպէս նաև պ. Երեցեանը լայտնեց, ներկայ լուսաբերին 34 տարին միայն բոլորեց հայոց բեմը։ Առաջին ներկայացումը տուել են 1859 թ. լուսաբերի 27-ին Մոսկվայում, հայ ուսանողները Հաջի-Սուլէյման պիեսով։ («Ցարազ» № 5 հաղորդում է նաև, որ Թիֆլիսում առաջին անգամ հայերէն լեզուով ներկայացում («Հայկ Դիւցազն», վենետիկցոց հեղինակութիւն) տեղի է ունեցել 1841 թ., վանքի առաջնորդարանին կից եղած հին դահլիճի մէջ, հովանաւորութեամբ հայ հոգևորականների։ Բայց այդ ներկայացումը օրինակ չի ծառայել և զորանով դերասանական խումբ չի կազմուել)։

Պ. ԱՒԵՏ. ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆ, Թիֆլիսի Մողնու ս. Գէորգ եկեղեցու նորընտիր (1892 թ.) երեցփոխանը, համապատասխանելով իրան ընտրող ծխականների ակնկալութիւններին (ընտրողներն էին գլխաւորապէս նոյն եկեղեցու ծխական երիտասարդութիւնից) լուսաբերի 10-ին դրաւորապէս հրաւիրեց հաստատելու 1893 թ. համար կազմած նոր նախահաշիւը և երկրորդ՝ խորհրդակցելու եկեղեցու մի քանի կարևոր խնդիրների մասին, որպիսիք են 1) Ծխական հոգաբարձութեան կազմակերպութիւն, 2) Քարոզիչ և մշտական երգեցիկ խումբ ունենալ, 3) Աւագ քահանայի խնդիր, 4) Օրինակատարութեանց մոմերը եկեղեցուց գնելը, 5) Սեպհական դիակառք ունենալը, 6) Եկեղեցու ներքին և արտաքին բարեկարգութիւնը։ Ժողովը սակայն չը կայացաւ։ Ժողովը լուսաձգուել է մինչև որ կը պարզի ժողով հրաւիրելու օրինաւորութեան խնդիրը։ Մողնու ս. Գէորգ եկեղեցու լարգոյ երեցփոխանը լաջողակ միտք է ունեցել խորհրդակցութեան համար հրաւիրել նաև ծխական կանանց, որոնց աջակցութիւնը ամենայն իրաւամբ նա անհրաժեշտ էր համարել։

ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ, որոշմամբ կայսերական Կովկասեան բժշկ. Ընկերութեան և համաձայնութեամբ կառավարութեան, կայանալու է առաջիկայ 21—28 փետրարի։ Քննելու խնդիրները վերաբերելու են խոլերայի դէմ առնելիք միջոցներին։ Ընկերութիւնը վճռեց հրաւիրել ժողովին Կովկասի բոլոր բժիշկներին, նահանգապետներին, քաղաքագլուխներին, Անդրկովկ. երկաթուղու կառավարչին, կարանտինա-մաքսային և պոստա-հեռագրական շրջանների կառավարիչներին՝ անձամբ ներկայանալու կամ պատգամաւորների միջոցով։

Համաժողովը ունենալու է ընդհանուր ժողովներ և սեկցիաներ։ Նիստեր. առաջինները կը լինեն հրապարակական, իսկ երկրորդները՝ փակ։

Գ. Մ. ԷՔՄԱԼԵԱՆ, *ինչպէս հաղորդում է* „Новое Обозрѣніе", *նոտաների է վերածել ս. պատարագի բոլոր եղանակները։ Վերածութիւնը արել է երեք ձևով* 1) *սոլօ, երկու տենորի և մի բասի համար.* 2) *կւարտէտ՝ դիսկանտի, ալտայի, տենորի և բասի համար.* 3) *նոյնպէս կւարտետ՝ երկու տենորի և երկու բասի համար. Պր. Էքմալեանը ներկայացրել է իւր այդ գործը Պետերբուրգի կոնսերւատորիային, որը այդ մասին շատ լաւ կարծիք է յայտնել։ Պր. Էքմալեանը խնդրում է Էջմիածնի սինոդից թոյլտուութիւն իւր այդ աշխատանքը հրատարակելու համար։*

ՎՐԻՊԱԿՆԵՐ «*Մուրճ*» № 12, 1892 *թ.*

«*Մուրճ*»-*ի անցեալ գործունէութիւնը յօդւածում՝*

էջ	*տող*	*տպւած է*	*ուղիղն է*
1730	10	*փորձը*	«*Փորձը*»
1735	12	*ովքեր լինելու*	*ովքեր են լինելու*
1738	4	*փորձերցից*	*փորձերից*
1742	16—17	*նիւնական*	*նիւթական*
	Զանազան լուրերում՝		
1888	20	*մարդկութիւնը*	*մարդկութեանը*
»	23	*գլխաւորապէս*	*գլխաւոր*
»	34	*հիմնւել էր*	*հիմնել էր*

ՆՈՐ ՍՏԱՑՒԱԾ ԳՐՔԵՐ.

1) ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, *Յովհաննէս.*—«*Բանաստեղծութիւններ*», *երկրորդ հատոր. Մոսկւա, տպ. Մ. Բարխուդարեանի,* 1892 *թ., գինն է* 60 *կոպէկ։*

2) «ԱՐԱՔՍ», *պատկերազարդ հանդէս, երկրորդ գիրք* 1892 *թ. Հրատարակիչ Ս. Գիւլամիրեանց. Պետերբուրգ, տպ. Սկորոխոդովի,* 1892 *թ., գինն է* 2 *ռուբլի* 50 *կոպէկ։*

3) ԱՍՔԱՆԱԶ, *Փամբակեցի.* «*Սիրոյ պօէզիա*» (*Նմանողութիւն, ըր հեղինակի*).—*Հրատ. Ասք-Աշ,* № 2, *Թիֆլիս, տպար. Արօր Նաղարեանի,* 1893 *թ. գինն է* 20 *կոպէկ։*

4) ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ, *Մակար, ծ. վարդապետ.*—«*Աղւանից Երկիր և դրացիք*» (*միջին Դաղստան*). *Թիֆլիս, տպար. Մ. Շարաձէի,* 1893 *թ., գինն է* 1 *ռուբլի։*

Խմբագիր՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ